ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀԱՎԱՏՔ

Կյանք Հիմնված Աստծո Սիրո Վրա
Մաս 2

«Բայց առանց հավատքի անկարելի է հաճո լինել. որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, թե նա կա, և թե իրան խնդրողներին վարձահատույց կլինի:» Եբրայեցիս 11:6

Արմատական Հավատք Նշանակում է...

1. Հավատալ, երբ չեմ տեսնում

«Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը՝ և չերևացող բաների ապացույցն է:» Եբրայեցիս 11:1

2. Հնազանդել, երբ չեմ հասկանում

«<u>Հավատքով</u> Նոյը պատգամ առնելով դեռ չերևացած բաների համար և երկյուղած լինելով շինեց տապանը իր տան փրկության համար, որով աշխարհքիս դատապարտեց. և ժառանգ եղավ հավատքով լինող արդարությանը:» Եբրայեցիս 11:7

«<u>Հավատքով</u> Աբրահամը երբոր կանչվեցավ <u>հնազանդ եղավ</u> դուրս գնալով այնտեղ, որ ժառանգության համար ստանալու էր. և դուրս եկավ գնաց առանց գիտենալու թե ուր է գնում:» Եբրայեցիս 11:8

3. Հետևողական լինել, երբ չեմ ցանկանում

«<u>Հավատքով</u> թողեց Մովսեսը Եգիպտոսը չվախենալով թագավորի բարկությունիցը. որովհետև <u>համբերեց</u>՝ անտեսանելուն տեսնողի պես:» Եբրայեցիս 11:27

«Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը՝ և չերևացող բաների ապացույցն է:» Եբրայեցիս 11:1

4. Դավանել այն ինչ որ կատարվելու է

«<u>Հավատքով</u> Հովսեփը վախճանելիս հիշեց Իսրայելի որդկանց դուրս գնալու մասին, և իր ոսկորների համար հրաման տվավ:» Եբրայեցիս 11:22

«<u>Հավատքով</u> ենք իմանում, որ աշխարհքներն <u>Աստծո խոսքովը</u> հաստատվեցան, որ չերևողներիցն այս տեսնվողներս եղած են:» Եբրայեցիս 11:3

«Որովհետև նա <u>ասեց և եղավ</u>, նա հրամայեց և հաստատվեցավ:» Սաղմոս 33:9

«Շատ ազգերի հայր արի քեզ Աստծո առաջին, որին հավատաց, որ մեռելներին կենդանի է անում՝ <u>և չլինող բաները լինողի պես է կանչում:</u>» Հռովմայեցիս 4:17

«Քանի սրտով <u>հավատում</u> ենք արդարանալու համար, և բերանով <u>դավանում</u> ենք փրկվելու համար:» Հռովմայեցիս 10:10

5. Տալ, երբ ինքս չունեմ

«<u>Հավատքով</u> Հաբելը Կայենիցն ավելի լավ <u>պատարագ մատուցրեց Աստծուն,</u> որով...Աստված նրա պատարագների վրա վկայություն տվավ.» Եբրայեցիս 11:4

«Որովհետև...նրանց ուրախության առավելությունը...իրանց կարողության չափ վկայում են, և կարողությունիցն էլ ավելի հոժար կամքով:» Բ Կորնթացիս 8:2-3

«Պատվիր Տիրոջը քո ստացվածքիցը, և քո բոլոր բերքերի երախայրիներիցը:» Առակաց 3:9

«Ամեն մեկ միաշաբաթ օրերը ձեզանից ամեն մեկը թող իրան մոտ հավաքի՝ ինչ որ կհաջողվի:» Ա Կորնթացիս 16:2

6. Շնորհակալ լինել Աստծուն՝ ստանալուց առաջ

«Հավատքով Երիքովի պարիսպները վայր ընկան, երբոր յոթն օր նրա շուրջը պտտեցին:» Եբրայեցիս 11:30

«Ամեն ինչ որ աղոթք անելով խնդրեք, հավատացեք թե կառնեք, և կլինի ձեզ:» Մարկոս 11:24

«Հիսուսն ասեց. Ձեր հավատքի պես թող լինի ձեզ:» Մատթեոս 9:29

7. Վստահել Աստծուն, երբ չեմ հասկանում

«Եվ սրանք ամենը հավատքով վկայություն առան, բայց խոստմունքը չընդունեցին. Որովհետև Աստված մեզ համար ավելի լավ բան նախապատրաստեց...» Եբրայեցիս 11:39-40

«Ուրեմն հավատքը լսելուցն է, և լսելը՝ Աստծո խոսքիցը:» Հռովմայեցիս 10:17

Հաջորդ Կիրակի
ԱՐՄԱՏԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ
Հովիվ Սարօ Խաչիկեան